Եղվարդ

Բնակչություն՝ 251

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 23 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1135 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Եղվարդը Ստ.Օրբելյանի կողմից հիշատակվում է «Աղահորդ» անվամբ և մտնում էր Սյունիք աշխարհի Քաշոինիկ գավառի մեջ:
Եղվարդը 7-16դդ. արաբ, ապա՝ մոնղոլ և թուրք հորդաների կողմից բազմիցս ավերվել է և վերականգնվել: Գյուղից մոտ 9 կմ արևելք Շուշանների դաշտում 1725թ. տեղի է ունեցել ճակատամարտ՝ Թորոս իշխանի հրամանատարությամբ գործող Դավիթ Բեկի ջոկատներից մեկի և Ֆաթալի խանի զորքերի միջև: Թորոս իշխանը զոհվել է, որի գերեզմանը գտնվում է Եղվարդ գյուղում: Որպես ապստամբ գյուղ 1729-30թթ. Իրանի շահի հրամանով ավերվել է, իսկ բնակիչները աքսորվել են Պարսկաստան՝ Ղարադաղի Վինա գյուղ:
Մեկ դար անց թուրքմենչայի 1828թ. պայմանագրի հիման վրա եղվարդցիները 1830թ. թվով 54 ընտանիք, վերադարձել են գյուղ:
Եղվարդի շրջակայքում են գտնվում Շինատեղ, Խաչի խութ բնակատեղիները, կան 10-19 դարերի գերեզմանոցներ՝ բազմաթիվ տապանագիր խաչքարերով: Գյուղի կենտրոնում գտնվող սբ Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1700թ. և կանգուն է: Գյուղի մոտ է գտնվում նաև «Սպիտակ աղբյուրի խաչ» կոչվող եկեղեցին:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 1295 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 707 հա, որից՝
- վարելահող 403 հա, բազմամյա տնկարկ՝ 11 հա, արոտ՝ 158 հա, այլ հողատեսք՝135 հա
- բնակավայրերի հողեր՝ 77 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության

հողեր՝16 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝1 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 2 հա,
- անտառային հողեր՝ 492 հա, որից անտառածածկ՝ 175 հա